Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

PRINTEL
Promoting Innovative Teaching & Learning

ERASMUS+ PRINTEL ՆԱԽԱԳԾԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

(100 միավորանոց սանդղակով)

1. **Դասավանդում ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունում**.
   ա) դասավանդման/մանկավարժական հմտություններ – առավելագույնը՝ **30** միավոր
   բ) լեզուներ, ՏՀՏ, մասնագիտական և այլ – առավելագույնը՝ **20** միավոր

Այս միավորները հաշվարկվում են ըստ վարչությունում աշխատանքի տարիների, վերապատրաստած դասախոսների/ունկնդիրների թվի և նրանց բավարարվածության գնահատականի:

2. **Անգլերենի իմացության մակարդակ.**
   C2 – **20** միավոր
   C1 – **15** միավոր

Ներկայացվում է համապատասխան հիմնավորող փաստաթուղթ, որի բացակայության պարագայում նախատեսվում է թեստի հանձնում ԵՊՀ-ում (ս.թ. օգոստոսի 31-ին):

3. **Դասավանդման պորտֆոլիո** – առավելագույնը՝ **20** միավոր

Այս միավորը հաշվարկվում է համաձայն պորտֆոլիոյում ներկայացված նյութերի կազմի և որակի. CV, դասավանդման մեթոդներ, դասավանդվող դասընթացների ցանկ և համառոտագրեր (ըստ ԵՊՀ-ում ընդունված ձևաչափի), դասընթացների առարկայական ծրագրեր (օրացուցային պլաններ), վերջին 5 տարում հրատարակված ուսումնամեթոդական աշխատանքների ցանկ, առցանց դասընթացների հղումներ, նորարարական մեթոդներով և տեխնոլոգիաներով դասավանդման օրինակներ, դասավանդման բարելավմանն ուղղված գործողությունների օրինակներ, ուսանողական հարցումների գնահատականներ (վերջին 5 տարում) և այլ լրացուցիչ նյութեր:

4. **ՏՀՏ հմտություններ** – առավելագույնը՝ **10** միավոր

Համապատասխան թեստի հանձնում ԵՊՀ-ում (ս.թ. սեպտեմբերի 3-ին):

6. **Գիտական աստիճան/կոչում** – **10** միավոր

5. **Մասնակցությունը հարցազրույցին** – առավելագույնը՝ **10** միավոր

Հարցազրույցը տեղի կունենա սեպտեմբերի 4-ին և 5-ին՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի աշխատասենյակում:

Առավելագույնը՝ 100 միավոր:

Սահմանափակումներ.

Միևնույն ֆակուլտետից կարող է ընտրվել մինչև 3 դասախոս: